# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ **ԵԱՆԴ/1305/02/16**
**2026թ.**

Քաղաքացիական գործ թիվ ԵԱՆԴ/1305/02/16
Նախագահող դատավոր՝ Կ. Համբարձումյան
Դատավորներ՝ Ն. Մարգարյան
Հ. Ենոքյան

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող* Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
*զեկուցող* Ս. ՄԵՂՐՅԱՆ
Ա. ԱԹԱԲԵԿՅԱՆ
Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ

2026 թվականի նոյեմբերի 25-ին

գրավոր ընթացակարգով քննելով ըստ Հասմիկ Գյուրջյանի, Աննա Սահակյանի, Հասմիկ Խաչիկյանի, Մագդա Հակոբյանի, Վարդուհի Ֆաքիրյանի, Բագրատ Քերոբյանի (Հասմիկ Գրիգորյանի իրավահաջորդն է), Ամալիա Բաբայանի, Երազիկ Աշոտյանի, Անուշ Գալստյանի, Անահիտ Սարգսյանի, Քրիստինե Բաղդասարյանի և Լարիսա Սարուխանյանի (այսուհետ՝ Համահայցվորներ) հայցի ընդդեմ Անուշիկ Պետրոսյանի՝ մասնակցին ընկերությունից հեռացնելու պահանջի մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.05.2025 թվականի որոշման դեմ Անուշիկ Պետրոսյանի վճռաբեկ բողոքը,

## Պ Ա Ր Զ Ե Ց

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Համահայցվորները պահանջել են «Անի 96» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) մասնակից Համլետ Պետրոսյանին հեռացնել Ընկերությունից:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 28.06.2024 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 15.05.2025 թվականի որոշմամբ Համահայցվորների վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 28.06.2024 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Անուշիկ Պետրոսյանը (ներկայացուցիչ Գուրգեն Թորոսյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ ու 22-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-9-րդ, 192-րդ և 380-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված հիմքերի առկայությունը պատճառաբանել է հետևյալ հիմնավորումներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ հայցադիմումում Անուշիկ Պետրոսյանի դեմ ներկայացված որևէ պահանջ առկա չէ, և վկայակոչված որևէ փաստարկ նրան վերագրված չէ:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ հայցի հարուցման ժամանակ պատասխանողը չի եղել Ընկերության մասնակից, և չէին կարող առկա լինել այնպիսի փաստեր, որոնք վերջինիս Ընկերությունից հեռացնելու հիմք կտային:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ տվյալ դեպքում ոչ միայն առկա չէ Ընկերության մասնակցի կողմից Ընկերության բնականոն գործունեությանը խոչընդոտելու փաստը, այլև բացակայում է պատճառական կապը մասնակցի գործողությունների և Ընկերության բնականոն գործունեության խոչընդոտված լինելու փաստի միջև, որի պայմաններում սույն իրավահարաբերության նկատմամբ Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի դրույթը կիրառելի չէ:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասը վերաբերում է Ընկերության «ներսում» ունեցած իրավունքի ծավալին, այլ ոչ թե գործողությունների հետևանքներին:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 15.05.2025 թվականի դատական ակտը և օրինական ուժ տալ Դատարանի 28.06.2024 թվականի վճռին:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) դիմելով Դատարան՝ Համահայցվորները պահանջել են **մասնակից Համլետ Պետրոսյանին** հեռացնել Ընկերությունից:

Հայցի փաստական հիմքում Համահայցվորները դրել են հետևյալը.

- Ընկերության մասնակից և տնօրեն Համլետ Պետրոսյանն Ընկերության միջոցները տնօրինել ու գրպանել է իր ցանկությամբ,

- ի խախտումն Ընկերության Կանոնադրության՝ օգտվելով իր ձայների քանակից, երբևէ ընդհանուր ժողով չի հրավիրել,

- իրենց անհայտ է պահուստային կապիտալի միջոցների ծախսման և առաջացող մաքուր շահույթի բաշխման ճակատագիրը՝ ըստ մասնակիցների ունեցած բաժնեմասերին համապատասխան **(հատոր 1-րդ, գ.թ. 4-7)**.

2) 06.05.1999 թվականին Ձեռնարկությունների պետական ռեգիստրի կողմից գրանցվել է Ընկերության նոր խմբագրությամբ կանոնադրությունը (այսուհետ՝ Կանոնադրություն):

Կանոնադրության 4.1.-ին կետի համաձայն՝ Ընկերության մասնակիցներ են համարվում այն անձինք, ովքեր նշված են նույն կանոնադրության հավելվածում: Մասնակիցները կարող են փոփոխվել Ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով՝ մասնակիցների ընդունման, ազատման, հեռացման, ամբողջ բաժնեմասի օտարման միջոցով, ինչպես նաև մասնակցի ամբողջ բաժնեմասի վրա բռնագանձում տարածելու դեպքում:

Կանոնադրության 4.2.-րդ կետի համաձայն՝ Ընկերության մասնակիցներն իրավունք ունեն՝

- նույն կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցել Ընկերության կառավարմանը

- հանդես գալ առաջարկություններով Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովում

- Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովում քվեարկել իրեն պատկանող լրիվ վճարված բաժնեմասերի ձայների չափով

- ստանալ Ընկերության գործունեությունից ստեղծվող շահույթի (դիվիդենտի) մասը

- Ընկերության լուծարվելու դեպքում ստանալ շահույթի իր մասը

- Ընկերության լուծարվելու դեպքում ստանալ պարտատերերի հետ կատարված հաշվարկներից հետո մնացած գույքի մասը կամ դրա արժեքը

- տեղեկատվություն ստանալ Ընկերության գործունեության մասին, ծանոթանալ հաշվապահական հաշվառման, հաշվետվության, Ընկերության արտադրատնտեսական գործունեության այլ փաստաթղթերի հետ

- ցանկացած ժամանակ դուրս գալ ընկերությունից (անկախ մյուս մասնակիցների համաձայնությունից)

- հայցով դիմել դատարան՝ Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին և այլ իրավական ակտերին հակասող որոշումների գանգատարկման նպատակով

- Ընկերության միջոցների հաշվին Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման դեպքում անվճար ստանալ համապատասխան քանակությամբ բաժնեմասեր

- օգտվել Ընկերության կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

Ընկերության մասնակիցներն ունեն իրենց սեփականությունը հանդիսացող բաժնեմասերը (դրանց մասը) օտարելու կամ այլ՝ օրենքով չարգելված ձևով, այլ անձանց փոխանցելու իրավունք: (...):

Կանոնադրության 4.3.-րդ կետի համաձայն՝ Ընկերության մասնակիցները պարտավոր են՝

- նույն կանոնադրությամբ կամ Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի որոշմամբ սահմանված կարգի համաձայն կատարել ներդրումներ,

- չհրապարակել գաղտնի տեղեկություններ Ընկերության գործունեության վերաբերյալ,

- կատարել Ընկերության նկատմամբ ստանձնած պարտավորությունները,

- պահպանել նույն կանոնադրության դրույթները:

Կանոնադրության 4.6.-րդ կետի համաձայն՝ այն մասնակիցը, որը նույն կանոնադրությամբ նախատեսված իր պարտականությունները չի կատարում կամ ոչ պատշաճ ձևով է կատարում, կամ իր գործողություններով խոչընդոտում է Ընկերության նպատակներին հասնելուն, կարող է հեռացվել Ընկերությունից՝ մասնակիցների միաձայն որոշմամբ:

Ընկերության կանոնադրության հավելվածի համաձայն՝ Ընկերության մասնակիցներն են՝ Համլետ Պետրոսյանը՝ 70 տոկոս բաժնեմասի չափով, Հասմիկ Գյուրջյանը, Մագդա Հակոբյանը, Աննա Սահակյանը, Վարդուհի Ֆաքիրյանը, Լարիսա Սարուխանովան, Հասմիկ Խաչիկյանը, Երազիկ Աշոտյանը, Անահիտ Սարգսյանը, Լյուբով Հակոբյանը, Քրիստինե Բաղդասարյանը, Հասմիկ Գրիգորյանը, Ամալյա Բաբայանը, Ջուլիետտա Հակոբյանը, Անուշ Գալստյանը և Սոսիկ Հարությունյանը՝ 2-ական տոկոս բաժնեմասի չափով **(հատոր 1-ին, գ.թ. 17-27)**.

3) Համլետ Պետրոսյանն Ընկերությունում ունեցած իր բաժնեմասը նվիրել է Անուշիկ Պետրոսյանին **(անվիճելի փաստ)**.

4) Համլետ Պետրոսյանը մահացել է 05.06.2016 թվականին **(հատոր 2-րդ, գ.թ. 37)**.

5) 15.06.2017 թվականի դրությամբ ՀՀ ԱՆ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պետական միասնական գրանցամատյանից կատարված էլեկտրոնային քաղվածքի համաձայն՝ Ընկերության գործադիր մարմնի ղեկավարն է տնօրեն Համլետ Պետրոսյանը: Ընկերության մասնակիցներն են՝ Հասմիկ Գյուրջյանը, Մագդա Հակոբյանը, Աննա Սահակյանը, Վարդուհի Ֆաքիրյանը, Լարիսա Սարուխանովան, Հասմիկ Խաչիկյանը, Երազիկ Աշոտյանը, Անահիտ Սարգսյանը, Քրիստինե Բաղդասարյանը, Հասմիկ Գրիգորյանը, Ամալյա Բաբայանը, Անուշ Գալստյանը և Սոսիկ Հարությունյանը՝

2-ական տոկոս բաժնեմասի չափով, ու Անուշիկ Պետրոսյանը՝ 74 տոկոս բաժնեմասի չափով:

Անուշիկ Պետրոսյանը գրանցամատյանում գրառվել է 19.04.2016 թվականին **(հատոր 2-րդ, գ.թ. 86-89)**.

6) Դատարանի 20.03.2018 թվականի որոշմամբ Համահայցվորների միջնորդությունը բավարարվել է՝ սույն գործով որպես պատասխանող է ներգրավվել Անուշիկ Պետրոսյանը **(հատոր 3-րդ, գ.թ. 80)**.

7) 12.10.2022 թվականի դրությամբ ՀՀ ԱՆ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պետական միասնական գրանցամատյանից կատարված էլեկտրոնային քաղվածքի համաձայն՝ Ընկերության գործադիր մարմնի ղեկավարն է տնօրեն Արայիկ Պետրոսյանը: Ընկերության մասնակիցներն են՝ Հասմիկ Գյուրջյանը, Աննա Սահակյանը, Վարդուհի Ֆաքիրյանը, Լարիսա Սարուխանովան, Հասմիկ Խաչիկյանը, Երազիկ Աշոտյանը, Անահիտ Սարգսյանը, Ամալյա Բաբայանը, Անուշ Գալստյանը և Բագրատ Քերոբյանը՝ 2-ական տոկոս բաժնեմասի չափով, ու Անուշիկ Պետրոսյանը՝ 78 տոկոս բաժնեմասի չափով **(հատոր 7-րդ, գ.թ. 66, 67)**:

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով՝ նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, քանի որ Վերաքննիչ դատարանի կիրառած Օրենքի 15-րդ ու 22-րդ հոդվածների կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տվել Օրենքի 15-րդ ու 22-րդ հոդվածների այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

*Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակցի կողմից իր բաժնեմասի օտարման դեպքում նոր մասնակցին են փոխանցվում ոչ միայն նախորդ մասնակցի իրավունքներն ու պարտականությունները, այլ նաև վերջինիս անձնական վարքագծով պայմանավորված՝ ընկերությունից հեռացնելու հիմքերը:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝

սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն է համարվում մեկ կամ մի քանի անձանց հիմնադրած ընկերությունը, որի կանոնադրական կապիտալը բաժանված է կանոնադրությամբ սահմանված չափերով բաժնեմասերի: (…):

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության իրավական վիճակը, ինչպես նաև նրա մասնակիցների իրավունքները և պարտականությունները սահմանվում են նույն օրենսգրքով ու սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին օրենքով: (…):

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (այսուհետ՝ ընկերություն) է համարվում մեկ կամ մի քանի անձանց հիմնադրած ընկերությունը, որի կանոնադրական կապիտալը բաժանված է ընկերության կանոնադրությամբ սահմանված չափերով բաժնեմասերի:

Օրենքի 11-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ անձը համարվում է ընկերության մասնակից իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից ընկերության մասնակիցների գրանցամատյանում նրա՝ որպես այդպիսին գրանցվելու պահից: (…):

Օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ ընկերության մասնակիցներն իրավունք ունեն՝

ա) նույն օրենքով կամ ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցել ընկերության կառավարմանը.

բ) ստանալ տեղեկություններ ընկերության գործունեության վերաբերյալ.

գ) ստանալ ընկերության գործունեությունից ստացվող՝ օրենքով սահմանված շահույթի մասը.

դ) օրենքով սահմանված կարգով իր բաժնեմասը (դրա մասը) օտարել ընկերության մեկ կամ մի քանի մասնակիցների կամ երրորդ անձանց.

ե) անկախ մյուս մասնակիցների համաձայնությունից, ցանկացած պահի դուրս գալ ընկերությունից.

զ) ընկերության լուծարման դեպքում բաժին ստանալ ընկերության մնացած գույքից:

Ընկերության մասնակիցներն ունեն նաև օրենքով, ընկերության կանոնադրությամբ կամ ընկերության մասնակիցների միաձայն որոշմամբ սահմանված այլ իրավունքներ:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ ընկերության մասնակիցները պարտավոր են՝

ա) ներդրումներ կատարել ընկերության կանոնադրական կապիտալում ընկերության հիմնադրման մասին պայմանագրով կամ ընկերության մասնակիցների միաձայն որոշմամբ սահմանված կարգով.

բ) չհրապարակել ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնիք պարունակող տեղեկություններ, բացի օրենքով սահմանված դեպքերից:

Ընկերության մասնակիցները կրում են նաև օրենքով և ընկերության կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ (…): Բաժնեմասը ձեռք բերողին փոխանցվում են ընկերության մասնակցի՝ մինչև բաժնեմասի օտարումը ծագած իրավունքները և պարտականությունները:

Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընկերության մասնակիցը (մասնակիցները), որը (որոնք) գումարային առումով տնօրինում է (են) ընկերության առնվազն 10 տոկոս բաժնեմասը, իրավունք ունի (ունեն) դատական կարգով պահանջել ընկերության այլ մասնակցի հեռացումն ընկերությունից, եթե նա իր գործողություններով կամ անգործությամբ դժվարացնում կամ անհնարին է դարձնում ընկերության բնականոն գործունեությունը:

Վերը նշված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ընկերության այն մասնակիցը (մասնակիցները), որը (որոնք) գումարային առումով տնօրինում է (են) ընկերության առնվազն 10 տոկոս բաժնեմասը, իրավունք ունի (ունեն) դատական կարգով պահանջել այն մասնակցի հեռացումն ընկերությունից, որն իր գործողություններով կամ անգործությամբ դժվարացնում կամ անհնարին է դարձնում ընկերության բնականոն գործունեությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ իրավական դիրքորոշում է հայտնել, որ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցը, ում հեռացնելու վերաբերյալ պահանջ է ներկայացվել մյուս մասնակիցների կողմից, պետք է դրսևորած լինի այնպիսի վարքագիծ, որով դժվարացրած կամ անհնարին դարձրած լինի ընկերության բնականոն գործունեությունը: Միաժամանակ՝ նշված դրույթի կիրառման համար անհրաժեշտ է, որ այն վկայակոչած անձն ապացուցի.

ա) մասնակցի անգործության կամ գործողության առկայության փաստը,

բ) ընկերության բնականոն գործունեությանը խոչընդոտելու փաստը,

գ) պատճառահետևանքային կապը մասնակցի գործունեության (անգործության) և ընկերության բնականոն գործունեությանը խոչընդոտելու փաստերի միջև *(տե՛ս Մարինա և Արամ Զարգարյաններն ընդդեմ Կարեն Հարությունյանի թիվ ԵԴ2/30932/02/23 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.03.2026 թվականի որոշումը)*:

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը կարևորել է այն հանգամանքը, որ ընկերությունից մասնակցին հեռացնելու հայցապահանջների լուծման համար էական նշանակություն ունի ընկերության մասնակցի գործողության կամ անգործության հետևանքով ընկերության բնականոն գործունեության դժվարացման կամ անհնարինության փաստի առկայությունը, որը պետք է ապացուցի մասնակցին ընկերությունից հեռացնելու մասին պահանջ ներկայացրած անձը *(տե՛ս «Վտառ» ՍՊԸ-ի տնօրեն Մայիս Մեհրաբյանն ընդդեմ Մարիետա Պետրոսյանի թիվ ԵՄԴ/1174/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.10.2010 թվականի որոշումը)*:

ՀՀ վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը բաժնեմասերի միավորմամբ գործող տնտեսական ընկերություն է, այսինքն՝ ընկերություն, որի գործունեությանն անձի մասնակցության աստիճանը որոշվում է այդ անձի բաժնեմասի՝ ընդհանուր կանոնադրական կապիտալում ունեցած տոկոսով:

Ամփոփելով սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակցի բաժնեմասի և դրանից բխող՝ ընկերության մասնակցի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ վերոգրյալ կարգավորումները՝ ՀՀ վճռաբեկ

դատարանը եզրահանգել է, որ բաժնեմասն ընկերության և ընկերության մասնակցի միջև կորպորատիվ հարաբերությունների ծագման հիմքն է, որի միջոցով որոշվում է ընկերության և ընկերության մասնակցի՝ միմյանց միջև փոխադարձ իրավունքների և պարտականությունների ծավալը *(տե՛ս Անահիտ Ղազարյանի ընդդեմ Հարություն Ղազարյանի և «Շանտան» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/4634/02/16 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.09.2021 թվականի որոշումը)*:

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ ընկերության մասնակիցն իրավունք ունի իր բաժնեմասն օտարել այլ մասնակցի կամ երրորդ անձի, սակայն բաժնեմասը ձեռք բերողի համար մասնակցության իրավունքը ծագած կհամարվի պետական գրանցման պահից: Ընդ որում, մասնակցի վերաբերյալ տեղեկությունները, այդ թվում՝ բաժնեմասի չափը պետք է գրանցվի ինչպես իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից ընկերության մասնակիցների գրանցամատյանում, այնպես էլ փոփոխությունը պետք է արտացոլվի ընկերության կանոնադրությունում *(տե՛ս Սուսաննա Խաչատրյանն ընդդեմ Վիգեն Ասլանյան Ավանեսյանսի թիվ ԵԿԴ/0779/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2018 թվականի որոշումը)*:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բաժնեմասով պայմանավորված՝ ընկերության մասնակիցները ձեռք են բերում իրավունքներ և կրում պարտականություններ: Ընդ որում, բաժնեմասի օտարման դեպքում այն ձեռք բերողին փոխանցվում են ընկերության մասնակցի՝ մինչև բաժնեմասի օտարումը ծագած իրավունքները և պարտականությունները, որպիսի մոտեցումն ուղղված է ապահովելու կորպորատիվ-գույքային իրավահարաբերությունների շարունակականությունը բացառապես այնպիսի իրավունքների ու պարտականությունների մասով, որոնք ունեն տնտեսական շրջանառության օբյեկտիվ բնույթ և կապված են մասնակցի կարգավիճակից բխող գույքային կամ կազմակերպական իրավասությունների հետ:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ մասնակցի հեռացման ինստիտուտը, որպես հատուկ կորպորատիվ իրավական միջոց, ուղղված է ոչ թե գույքային հարաբերությունների կարգավորմանը, այլ ընկերության կառավարման արդյունավետության և ներգործուն համագործակցության ապահովմանը՝ այն դեպքերում, երբ կոնկրետ մասնակցի վարքագիծը դժվարացնում կամ անհնարին է դարձնում ընկերության բնականոն գործունեությունը: Այս ինստիտուտը պայմանավորված է անձնական-կորպորատիվ կապով և գնահատում է կոնկրետ մասնակցի փաստացի վարքագիծը տվյալ ընկերության ներսում:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված երկու իրավական կառուցակարգերի համակարգային վերլուծությունը վկայում է դրանց տարբեր իրավաբանական բնույթի մասին: Մասնավորապես, բաժնեմասի օտարման արդյունքով փոխանցվում են այն իրավունքներն ու պարտականությունները, որոնք օբյեկտիվորեն կապված են մասնակցի տնտեսական կարգավիճակի հետ, մինչդեռ մասնակցի հեռացման հիմքը ձևավորվում է բացառապես կոնկրետ մասնակցի անհատական վարքագծի գնահատման արդյունքում և

ունի անձնավորված բնույթ:

Ամփոփելով վերոգրյալը և նկատի ունենալով, որ ընկերությունից մասնակցի հեռացման հիմքն իր էությամբ դուրս է գույքային իրավունքների ու պարտականությունների փոխանցման դաշտից ու կապված է բացառապես անձնական վարքագծի գնահատմամբ պայմանավորված կորպորատիվ իրավահարաբերության հետ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բաժնեմասի օտարման արդյունքում մասնակցի փոփոխության դեպքում նախորդ մասնակցի վարքագծից բխող հեռացման հնարավոր հիմքը չի կարող «նախորդ մասնակցի իրավունքներն ու պարտականությունները նոր մասնակցին փոխանցվելու» ռեժիմով անցնել նոր մասնակցին, և նոր մասնակցի նկատմամբ այն ենթակա է գնահատման բացառապես սեփական գործողությունների կամ անգործության համատեքստում: Հակառակ մեկնաբանման դեպքում կխախտվի ինչպես կորպորատիվ իրավահարաբերությունների անձնավորված բնույթը, այնպես էլ հեռացման ինստիտուտի նպատակային բովանդակությունը:

***Վերը նշված իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.***

Սույն գործի փաստերի համաձայն՝ 06.05.1999 թվականին Ձեռնարկությունների պետական ռեգիստրի կողմից գրանցվել է Ընկերության նոր խմբագրությամբ Կանոնադրությունը, որով նախատեսվել են Ընկերության մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները (տե՛ս փաստ 2):

Ընկերության կանոնադրության հավելվածի համաձայն՝ Ընկերության մասնակիցներն են՝ Համլետ Պետրոսյանը՝ 70 տոկոս բաժնեմասի չափով, Հասմիկ Գյուրջյանը, Մագդա Հակոբյանը, Աննա Սահակյանը, Վարդուհի Ֆաքիրյանը, Լարիսա Սարուխանովան, Հասմիկ Խաչիկյանը, Երազիկ Աշոտյանը, Անահիտ Սարգսյանը, Լյուբով Հակոբյանը, Քրիստինե Բաղդասարյանը, Հասմիկ Գրիգորյանը, Ամալյա Բաբայանը, Ջուլիետտա Հակոբյանը, Անուշ Գալստյանը և Սոսիկ Հարությունյանը՝ 2-ական տոկոս բաժնեմասի չափով:

Դիմելով Դատարան և հայցի փաստական հիմքում դնելով այն հանգամանքները, որ Ընկերության մասնակից ու տնօրեն Համլետ Պետրոսյանն Ընկերության միջոցները տնօրինել և գրպանել է իր ցանկությամբ, ի խախտումն Ընկերության Կանոնադրության՝ օգտվելով իր ձայների քանակից, երբևէ ընդհանուր ժողով չի հրավիրել, նաև այն, որ իրենց անհայտ է պահուստային կապիտալի միջոցների ծախսման ու առաջացող մաքուր շահույթի բաշխման ճակատագիրը՝ ըստ մասնակիցների ունեցած բաժնեմասերին համապատասխան, Համահայցվորները պահանջել են մասնակից Համլետ Պետրոսյանին հեռացնել Ընկերությունից:

Համլետ Պետրոսյանն Ընկերությունում ունեցած իր բաժնեմասը նվիրել է Անուշիկ Պետրոսյանին, որի հիման վրա 19.04.2016 թվականին վերջինս գրառվել է Ընկերության գրանցամատյանում (տե՛ս փաստեր 3 և 5)**:**

Համլետ Պետրոսյանը մահացել է 05.06.2016 թվականին:

Դատարանի 20.03.2018 թվականի որոշմամբ Համահայցվորների միջնորդությունը բավարարվել է՝ սույն գործով որպես պատասխանող է ներգրավվել Անուշիկ Պետրոսյանը:

12.10.2022 թվականի դրությամբ ՀՀ ԱՆ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պետական միասնական գրանցամատյանից կատարված էլեկտրոնային քաղվածքի համաձայն՝ Ընկերության գործադիր մարմնի ղեկավարն է տնօրեն Արայիկ Պետրոսյանը: Ընկերության մասնակիցներն են՝ Հասմիկ Գյուրջյանը, Աննա Սահակյանը, Վարդուհի Ֆաքիրյանը, Լարիսա Սարուխանովան, Հասմիկ Խաչիկյանը, Երազիկ Աշոտյանը, Անահիտ Սարգսյանը, Քրիստինե Բաղդասարյանը, Ամալյա Բաբայանը, Անուշ Գալստյանը և Բագրատ Քերոբյանը՝ 2-ական տոկոս բաժնեմասի չափով, ու Անուշիկ Պետրոսյանը՝ 78 տոկոս բաժնեմասի չափով:

Դատարանը 28.06.2024 թվականի վճռով հայցը մերժել է այն պատճառաբանությամբ, որ՝

- «*հայցվորների կողմից որևէ կերպ չի հիմնավորվել ընկերության մասնակցին ընկերությունից հեռացնելու որևէ հիմքի առկայությունը, մասնավորապես հայցվորների կողմից որևէ կերպ չի հիմնավորվել փաստն առ այն, որ «Արֆարմացիա» ՓԲԸ-ի հանդեպ պարտավորությունը ձևավորվել է պատասխանողի ուղղակի գործողությունների հետևանքով, ինչպես նաև չեն հիմնավորվել, որ ընդհանուր ժողով հրավիրելը հանդիսանում է պատասխանողի՝ որպես ընկերության մասնակցի պարտավորությունը, որի կատարմամբ վերջինս կարող է զրկվել ընկերության մասնակցությունից*»,

- «*Սույն քաղաքացիական գործով ներկայացված պահանջով, որևէ կերպ չի հիմնավորվել վկայակոչված փաստերի և պատասխանողի գործողությունների միջև պատճառական կապի առկայությունը, դրանց՝ պատասխանողի գործողությունների հետևանքը հանդիսանալու հանգամանքը: Ընդ որում, սույն քաղաքացիական գործով հայցի հիմքում դրված փաստերը վերաբերելի են ընկերության տնօրենի կողմից իրականացվող գործառույթներին և դրանց իրավաչափությանը /ինչի գնահատումը դուրս է սույն քաղաքացիական գործի շրջանակներից/*»,

-«*սույն քաղաքացիական գործով ի սկզբանե, որպես պատասխանող ներգրավված է եղել Համլետ Պետրոսյանը, հետագայում Դատարանը որպես պատասխանող ներգրավվել է Անուշիկ Պետրոսյանին, սակայն Դատարան ներկայացված և գործի փաստերը բաժնում թվարկված ապացույցները վերաբերում են բացառապես Համլետ Պետրոսյանին, իսկ Անուշիկ Պետրոսյանի՝ որպես ընկերության մասնակցի ընկերությունից հեռացնելու վերաբերյալ որևէ ապացույց առկա չէ*»,

- «*սույն քաղաքացիական գործով չի ապացուցվել հայցվորների կողմից վկայակոչած փաստն առ այն որ ընկերության մասնակցի կողմից դրսևորվել է այնպիսի գործողություններ, որոնք խոչընդոտել կամ անհնարին են դարձրել ընկերության գործունեությունը: Ուստի նման պայմաններում փաստի չապացուցված լինելու պայմաններում դրա բացասական հետևանքները պետք է կրի այդ փաստն ապացուցելու պարտականությունը կրող հայցվոր կողմը*»:

Վերաքննիչ դատարանը, պատճառաբանելով, որ՝

- «*«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի այսպիսի մեկնաբանությամբ Դատարանը դե ֆակտո հնարավորություն է ստեղծել ընկերության ցանկացած մասնակցի համար իրեն ընկերությունից հեռացնելու պահանջ ներկայացված լինելու դեպքում օտարել մասնակցությունը իրեն անմիջապես փոխկապակցված անձին (տվյալ դեպքում՝ ըստ հայցվորների պնդման Անուշիկ Պետրոսյանը Համլետ Պետրոսյանի դուստրն է) և միայն այդ փաստի ուժով փաստացի խուսափել ընկերությունից հեռացնելու պահանջի՝ անգամ բովանդակային քննարկումից, ինչը վստահաբար չի բխում «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված իրավակարգավորման նպատակից*»,

- «*Անուշիկ Պետրոսյանը, որպես Համլետ Պետրոսյանի բաժնեմասը ձեռք բերած անձ՝ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով կրում է Համլետ Պետրոսյանի կատարած այն բոլոր գործողությունների և (կամ) դրսևորած անգործության իրավական հետևանքները, որոնք հիմք են հանդիսացել Համլետ Պետրոսյանին ընկերությունից հեռացնելու պահանջ ներկայացնելու համար և Անուշիկ Պետրոսյանը, որպես առևտրային կազմակերպության կանոնադրական հիմնադրամում նման խոշոր մասնակցություն ձեռք բերող անձ, կարող էր և պարտավոր էր ճշտել նման մասնակցության ձեռքբերմամբ պայմանավորված ռիսկերի ծավալը*»,

- «*ներկայացված պահանջը սոսկ մասնակցի փոխված լինելու պատճառաբանությամբ մերժելով Դատարանը բովանդակային քննարկման առարկա չի դարձրել հայցվորների բուն պահանջը՝ չհետազոտելով և գնահատական չտալով պահանջի հիմքում վկայակոչվող փաստերին*»,

15.05.2025 թվականի որոշմամբ Համահայցվորների վերաքննիչ բողոքը բավարարել է, Դատարանի 28.06.2024 թվականի վճիռը բեկանել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել հետևյալը.

Սույն գործի փաստերից հետևում է, որ Համահայցվորների կողմից ներկայացված պահանջի հիմքում դրվել են բացառապես Համլետ Պետրոսյանի՝ որպես ընկերության մասնակցի և տնօրենի վարքագծին վերաբերող հանգամանքներ, մասնավորապես՝ ընկերության կառավարման, ընկերության միջոցների տնօրինման, ընդհանուր ժողովներ չգումարելու ու շահույթի բաշխման հետ կապված գործողությունները և անգործությունը: Միաժամանակ, գործի նյութերով հաստատվում է, որ մինչև վեճի լուծումը Համլետ Պետրոսյանն օտարել է իրեն պատկանող բաժնեմասը, որի արդյունքում ընկերության մասնակից է դարձել Անուշիկ Պետրոսյանը, իսկ հետագայում Համլետ Պետրոսյանը մահացել է:

Վերոշարադրյալի համատեքստում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ հայցի հիմքում ընկած բոլոր հանգամանքները վերաբերում են բացառապես Համլետ Պետրոսյանի վարքագծին, մինչդեռ գործի նյութերը չեն պարունակում որևէ փաստական տվյալ այն մասին, որ Անուշիկ Պետրոսյանն ընկերության մասնակից դառնալուց հետո դրսևորել է այնպիսի գործողություն կամ անգործություն, որը կարող էր Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով գնահատվել որպես ընկերության բնականոն գործունեությունը դժվարացնող կամ անհնարին դարձնող վարքագիծ: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, վկայակոչելով Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասը, հանգել է ոչ իրավաչափ հետևության այն մասին, որ Անուշիկ Պետրոսյանը, որպես Համլետ Պետրոսյանի բաժնեմասը ձեռք բերած անձ, կրում է նաև վերջինիս գործողությունների և անգործության իրավական հետևանքները, որոնք հիմք են հանդիսացել Համլետ Պետրոսյանին ընկերությունից հեռացնելու պահանջ ներկայացնելու համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ, Վերաքննիչ դատարանը, ըստ էության, նույն իրավական ռեժիմի ներքո դիտարկելով մի կողմից մասնակցի կարգավիճակից բխող իրավունքների և պարտականությունների փոխանցումը, մյուս կողմից մասնակցի հեռացման ինստիտուտը՝ անտեսել է դրանց իրավաբանական էական տարբերությունները: Մասնավորապես, եթե իրավունքների և պարտականությունների փոխանցման նպատակը կորպորատիվ իրավահարաբերությունների շարունակականության ապահովումն է, ապա մասնակցի հեռացման ինստիտուտի նպատակը կոնկրետ մասնակցի վարքագծի գնահատման միջոցով ընկերության բնականոն գործունեության պաշտպանությունն է: Հետևաբար, նախկին մասնակցի վարքագծի հիման վրա ձևավորված հեռացման հնարավոր հիմքը չի կարող դիտվել որպես այնպիսի իրավական արժեք, որը բաժնեմասի հետ միասին ենթակա է փոխանցման նոր մասնակցին:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, ըստ որի՝ հակառակ մեկնաբանությունը հնարավորություն կստեղծի մասնակցին իր բաժնեմասը փոխանցել փոխկապակցված անձի և այդ կերպ խուսափել հեռացման պահանջի քննությունից, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավունքի նորմի մեկնաբանությունը չի կարող հիմնվել բացառապես դրա հնարավոր չարաշահման կանխավարկածի վրա, եթե այդ մեկնաբանության արդյունքում ձևավորվում է օրենքով չնախատեսված իրավական հետևանք: Հակառակ մոտեցումը կհանգեցնի նրան, որ մեկ անձի վարքագծի իրավական գնահատման հետևանքները կվերագրվեն մեկ այլ անձի՝ անկախ վերջինիս սեփական վարքագծից, ինչը կխախտի մասնակցի հեռացման ինստիտուտի անձնավորված բնույթը և պատասխանատվության անհատականացման հիմնարար սկզբունքը:

Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում նաև Վերաքննիչ դատարանի եզրահանգումն այն մասին, թե Անուշիկ Պետրոսյանը, որպես բաժնեմասը ձեռք բերող անձ, կարող էր և պարտավոր էր պարզել բաժնեմասի ձեռքբերման հետ կապված ռիսկերն ու, հետևաբար, կրել նախկին մասնակցի վարքագծից բխող իրավական հետևանքները: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նման մոտեցումը նույնականացնում է

բաժնեմասի ձեռքբերմամբ պայմանավորված տնտեսական կամ կորպորատիվ ռիսկերը նախկին մասնակցի անձնական վարքագծի իրավական գնահատման հետ, մինչդեռ Օրենքը նման իրավահաջորդություն չի նախատեսում:

Ավելին, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունը, թե Դատարանը չի անդրադարձել հայցի հիմքում ընկած փաստերի բովանդակային գնահատմանը, ինքնին չի հերքում Դատարանի այն հետևությունը, որ մասնակցի փոփոխությունից հետո նախկին մասնակցի վարքագծի հիման վրա ներկայացված հեռացման պահանջը չի կարող քննության առարկա դառնալ նոր մասնակցի նկատմամբ: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քանի դեռ բացակայում է նոր մասնակցի նկատմամբ Օրենքի 22-րդ հոդվածի կիրառման անհրաժեշտ նախապայմանը՝ վերջինիս սեփական վարքագծի վերաբերյալ համապատասխան պնդումների և փաստական հիմքերի առկայությունը, նախկին մասնակցի վարքագծի հանգամանքների բովանդակային ուսումնասիրությունը չի կարող ազդել վեճի իրավական լուծման վրա:

Նման պայմաններում Վերաքննիչ դատարանը, Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասին հաղորդելով դրա բովանդակությունից չբխող մեկնաբանություն և անտեսելով Օրենքի 22-րդ հոդվածով նախատեսված հեռացման ինստիտուտի անձնավորված բնույթը, հանգել է ոչ իրավաչափ եզրահանգման այն մասին, որ բաժնեմասի օտարման արդյունքում նոր մասնակցին կարող են փոխանցվել նաև նախկին մասնակցի վարքագծից բխող հեռացման հնարավոր հիմքերը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի ուժով Վերաքննիչ դատարանի 15.05.2025 թվականի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված՝ վերաքննիչ դատարանի դատական ակտն ամբողջությամբ բեկանելու և առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելը և Դատարանի դատական ակտին ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու

անհրաժեշտությունը բացակայում է:

Դատարանի 28.06.2024 թվականի վճռին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

**5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն գլխի [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլուխ] կանոններին համապատասխան:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի «ա» կետի համաձայն՝ պետական տուրքը ենթակա է վերադարձման մասնակի կամ լրիվ, եթե պետական տուրքը վճարվել է ավելի, քան պահանջվում է գործող օրենսդրությամբ:

Մինչև 30.10.2021 թվականը գործած խմբագրությամբ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ կետի «բ» ենթակետի բովանդակությունից բխում է, որ դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոքների համար պետական տուրքը գանձվում է ոչ դրամական պահանջի գործերով բազային տուրքի տասնապատիկի չափով:

Վճռաբեկ բողոքը բավարարելու՝ Վերաքննիչ դատարանի 15.05.2025 թվականի որոշումը բեկանելու և Դատարանի 28.06.2024 թվականի վճռին ամբողջությամբ օրինական ուժ տալու պայմաններում անդրադառնալով պետական տուրքը բաշխելու հարցին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

- Համահայցվորների կողմից հայցադիմումի և վերաքննիչ բողոքի համար օրենքով սահմանված գումարները նախապես վճարված լինելու պայմաններում դատական ծախսերի հարցն այդ մասերով պետք է համարել լուծված: Միաժամանակ նկատի ունենալով նաև այն, որ Համահայցվորների կողմից վերաքննիչ բողոք ներկայացնելու համար նախապես վճարվել է 30.000 ՀՀ դրամի չափով պետական տուրք, 20.000 ՀՀ դրամը պետք է վերադարձնել վերջիններիս՝ որպես ավել վճարված պետական տուրքի գումար.

- Համահայցվորներից հօգուտ Անուշիկ Պետրոսյանի պետք է բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոք ներկայացնելու համար սահմանված և Անուշիկ Պետրոսյանի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վճռաբեկ դատարանում այլ դատական ծախսերի վերաբերյալ պահանջ ներկայացված չլինելու պատճառաբանությամբ այդ ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ ու 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.05.2025 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 28.06.2024 թվականի վճռին:

2. Հասմիկ Գյուրջյանից, Աննա Սահակյանից, Հասմիկ Խաչիկյանից, Մագդա Հակոբյանից, Վարդուհի Ֆաքիրյանից, Բագրատ Քերոբյանից (Հասմիկ Գրիգորյանի իրավահաջորդն է), Ամալիա Բաբայանից, Երազիկ Աշոտյանից, Անուշ Գալստյանից, Անահիտ Սարգսյանից, Քրիստինե Բաղդասարյանից և Լարիսա Սարուխանյանից հօգուտ Անուշիկ Պետրոսյանի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար:

Այլ դատական ծախսերի հատուցման հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող* _____ ***Գ. ՀԱԿՈԲՅԱՆ***

*Զեկուցող* _____ ***Մ. ՄԵՂՐՅԱՆ***

_____ ***Ա. ԱԹԱԲԵԿՅԱՆ***

_____ ***Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆ***

_____ ***Ա. ՄԿՐՏՉՅԱՆ***

_____ ***Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ***